

Սուրեն Դանիելյան, Միջուկի տրոհումը. Սփիւռքահայ գրականութեան պատմութիւն, Գիրք 1, Ներածութիւն, Եր., «Զանգակ-97», 2011, 408 էջ*:

Մեր օրերում, բարեբախտաբար, դեռևս կան գիտնականներ, գիտության ճշմարիտ նվիրյալներ, որոնք, իրենց ուսերին առնելով մտավոր աշխատանքի ծանր բեռը, անաղմուկ ու մեն-մենակ կատարում են երբեմն գիտական մի ամբողջ խմբի հասու աշխատանք՝ բոլոր դեպքերում մնալով զարմանալի համեստ:

Այսօրվա հայ բանասիրության ուրիշ այլ արժանավոր անունների կողքին հատկապես առանձնանում է Սուրեն Դանիելյանը՝ գիտական վաստակաշատ մի այր, ով արդեն երեք տասնամյակից ավելի բացառիկ ջանադրությամբ հավաքում-համադրում է արևմտահայ, այնուհետև դրա պարտադրված գոյավիճակը դարձած Սփյուռքի գրականության բազմաթիվ փաստեր, ճշգրտում հայտնի ու անհայտ ուշարժան էջեր, կատարում պարբերացման հնարավոր վերարժեւորումներ՝ թարմ, միանգամայն կաղապարագերծ հայացքով աստիճանաբար ստեղծելով միաձույլ ու անտրոհելի հայրենի գրականությունից լեզվով ու բովանդակությամբ թեև տարբերվող, բայց էության մեջ նրա ազնիվ բաղադրիչը հանդիսացող Սփյուռքի գրականության պատմությունը: Ասում ենք՝ անտրոհելի, որովհետև հայտնի գրականության միջուկը մեկն է՝ խոր հայկականությունն ու համամարդկայնությունը: Այդ միջուկը, սակայն, բազմաշերտ է ու բազմանիստ՝ անհրաժեշտության դեպքում ունակ մանր ու մեծ տրոհումների...

Եվ ահա ընթերցողի սեղանին է հայ գրականության հերթական մեծ տրոհումներից մեկի լրջմիտ հայտնությունը՝ Սուրեն Դանիելյանի «Միջուկի տրոհումը. Սփիւռքահայ գրականութեան պատմութիւն» վերտառությամբ ստվարածավալ ուսումնասիրությունը¹: Այն, ի դեպ, մի հիմնարար աշխատության՝ սփյուռքահայ գրականության գիտական պատմության եռահատորի ներածությունն է՝ առաջին գիրքը:

Հեղինակը, խորապես գիտակցելով այն հանգամանքը, որ ժամանակակից գրականագիտության առարկայական առաջնահերթություններից մեկը, թերևս՝ առաջինը, հայոց գրականության պատմության վերընթերցումն է, որը թելադրում է հետազոտական խնդրադիր ու արդիական այնպիսի մեթոդաբանություններ և

*Ընդունվել է տպագրության 05.03.2012:

1 Տե՛ս Սուրեն Դանիելյան, Միջուկի տրոհումը. Սփիւռքահայ գրականութեան պատմութիւն, Գիրք 1, Ներածութիւն, Եր., «Զանգակ-97», 2011:

Գ (Ժ) Գրաթի, թիվ 1 (37) հունվար-մարտ, 2012

ՎԵՄ համահայկական հանդես

դիտանկյուններ, որոնք առավելագույն հնարավորություն են ընձեռում ուսումնասիրել գրականության պատմական ընթացքն ամբողջական համապատկերով, խիզախել է ձեռնամուխ լինելու չափազանց ծանր, բայց միաժամանակ շնորհակալ աշխատանքի:

Ս. Գանիելյանի ուսումնասիրության կարևոր արժանիքն ամենից առաջ նյութի ընդգրկման լայն շառավիղն է. այն սկզբնավորվում է 20-րդ դարի 20-ականներից ձգվող տակավին արևմտահայ կոչվող, սպա աստիճանաբար սփյուռքահայ վերանվանված գրականության դեզերումներից ու տենդագին ջղածգումներից: Պարբերացման այս առաջին հանգրվանի համակողմանի հիմնավորումը, ինչ խոսք, մեր գրականագիտության մեջ դեռևս կարոտ էր գիտական լուրջ կռվանների ու տեսական լայն քննության, ընդհանրական դիտարկումների և բնագրային վերընթերցման, ճանաչողական նոր հայացքի, ինչը կատարվել է սպառնիչ ու բարձր մակարդակով:

Գրականագետն իրավացիորեն կարծում է, որ հայրենի բնաշխարհից ու գրական ենթահողից պոկված սփյուռքահայ գրականությունն ունի վերադարձի անտեսանելի ու թափանցիկ թելեր և անխուսափելիորեն շարունակում է սնվել մայր երակից՝ միջավայրով ու ծանրության կենտրոնով, սակայն մնալով միշտ ինքնօրինակ: Այդ իսկ նկատառումով էլ ուսումնասիրության համապատկերում ըստ հարկի ներկայացվում են սփյուռքահայ և մայր գրականությունների բնորոշ առնչակցությունները, գոյաբանական ու գեղագիտական որոնումները, զարգացման ընդհանուր միտումները՝ օրինաչափությունների և անխուսափելի անակնկալների շղափաղ: Սա կարևոր ու լայնախոհ հայացք է, քանի որ գրականագիտության մեջ սակավադեպ չեն եղել վերոնշյալ գրականությունների անհարկի ու արհեստածին կղզիացումներին միտված արատավոր ու վնասակար փորձերը: Գրականության բազմափորձ պատմաբանը ուսումնասիրության զանազան էջերում որոնում, գտնում, սպա և մատնանշում է յուրաքանչյուր գրական երկի ակունքը, մանր ու մեծ աղերսը, որին հետևում է ծանրակշիռ ընդհանրացումը:

Հենց վերոնշյալ հիմնախնդրին է նվիրված Ս. Գանիելյանի ուսումնասիրության առաջին գլուխը («Սփյուռքահայ գրականութեան ակունքներում»): Գրքի հեղինակը տրամաբանված տրոհումներով հանգամանալից քննում է նախ՝ Հ. Օշականի, Վ. Թեքեյանի և Ջ. Խրախունու ստեղծագործությունները՝ Հովհ. Թումանյանի հետ զուգահեռներում, այնուհետև դրան հաջորդում է Ե. Չարենցի գրական վաստակի գնահատությունն արևմտահայ ու սփյուռքահայ գրամշակութային-արժեքանական փոխառնչությունների կիզակետում: Գիտական առանձին հետաքրքրություն են ներկայացնում նաև ազգային ինքնության արթնության տեսանկյունից դիտարկվող Բաֆֆու արձակի դասերը: Եվ այդպես շարունակ...

Անկեղծ ասած, ինչպես սովորաբար պատահում է, հենց այս զուգահեռականներում էլ թվում էր, թե սփյուռքահայ գրականության պատմաբանը պետք է վրիպեր, գնար ավելորդ չափազանցումների՝ հոգուտ գրականության իր նախընտրած բնամարզի, որը նա անտարակուսելիորեն սիրում ու գուրգուրում է հարազատ զավակի պես... Բնավ. վաղնջական գրականության մայր երակն ընկալած իմաստնացած գիտնականը բոլոր դեպքերում մնում է անաչառ ու խորաքնին հայացքով հայտնաբերում է այն կենարար վտակները, որոնք մեղմահոս, իսկ երբեմն շառաչյունով ընթանում են դեպի օվկիանը՝ իրենց յուրօրինակ ներկայանակներն ավելացնելով վերջինիս:

Մասնավորապես նշելի է Սփյուռքի գրական ուժերի դասակարգման սանդղակների հմտալի կիրառությունը, ինչը կարծես առաջինն է մեզանում, և ինչի շնորհիվ էլ գիտնականը, մի կողմ թողնելով մեր մեջ տակավին հարատևող հայտնի խմորումները, կասկածները, հիմնավորում է արևմտահայ նորագույն շրջանի դասական գրականության բարձր միջուկի իրավունքը՝ հայտնվելու մեր ընդհանուր, միասնական գեղարվեստական մտածողության առաջնային բնագծերում. Հակոբ Օշականը, Վահան Թեքեյանը, Կոստան Չարյանը, Հակոբ Մնձուրին, Համաստեղը, Շահան Շահնուրը, Վազգեն Շուշանյանը, Մուշեղ Իշխանը, առավել նորերից՝ Չարեհ Խրախունին, որը հենց վերջերս արժանացավ Հայաստանի Հանրապետության բարձրագույն՝ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանին: Հարցը միայն արևելահայ գրական մեծերին ձեռնոց նետելու «հանդգնությունը» չէ կամ հայրենի գրական մայրուղուն համընթաց զարգացումների կարողությունը: Բնավ. նրանց, արդարև, հաջողվեց ընդլայնել ու առաջ մղել ազգային գրական «ծանրաշարժ» գումակը: Իսկ դա նշանակում է գրական հայացքի խորացում, արևմտահայ գեղարվեստական ավանդույթի համարձակ շարունակականություն: Դա նշանակում է, ինչպես նկատել է Ս. Գանիեյանը, Էական նպաստ հայ գրական մտքի նոր տեղաշարժերի արժևորման ճանապարհին: Արևմտահայ նորագույն գրականությունն ամանցյալ չէ խորհրդահայ ու հետանկախ շրջանի հայրենի ներուժին, այլ նրա զուգակիցն է, լուծընկերը: Ավելին, հայ գրականության վերջին հարյուրամյակում գրական հարուստ ու տարամետ այդ ջոկատը, ընդունենք, անհամեմատ դժվարին պայմաններում «սայթաքելով» ու բարձրանալով, կարողացել է իր առջև դնել գրականության մեջ ազգային ինքնության գերխնդիրը՝ թիկունքում զգալով արևմտահայության շնչառությունը:

Մեր համոզմամբ՝ այդ գրականության նորագույն առաքելությունն արդեն արևմտահայ ժողովրդի պաշտպանությունն է. ժողովուրդը գրականություն է պահում, իսկ գրականությունը փորձում է թույլ չտալ ժողովրդի ուժացման արագության նոր ընթացքը: Սա այն հետևություններից է, որոնք քաղել ենք գրախոսվող աշխատասիրության ներքին տրամաբանությունից: Բայց որքա՞ն ժամանակ կտևի նման հարաբերակցությունը, ինչպե՞ս կթեքվեն նժարները պատմության կեռմաններում՝ ցույց կտա ժամանակը: Ի թիվս փոքր ժողովուրդների ազգային-քաղաքական ճակատագրի՝ ուզում ենք հավատալ Սփյուռքում ստեղծված ու ստեղծվող գրականության գրապատմական ու զուտ գեղարվեստական որակներին, պատասխանատվության գիտակցումին:

Կարծում ենք՝ հեղինակը գիտական արդյունավոր շահագրգռություն է ցուցաբերել՝ համադրությունների մեթոդաբանական եղանակի շնորհիվ ներկայացնելու սփյուռքահայ գրական զարգացման համապատկերը: Այսպես, Հովհ. Թումանյանի հետ զուգահեռներում է հաստատվում վերջինիս գլխավոր «ընդդիմախոս» դարձած Հ. Օշականի համակարգի ինքնության սահմանը: Ս. Գանիեյանը գնահատման չափորոշիչները որսում է ստեղծագործական ներքին շերտերում. թումանյանական ռեալիստական տեսողության սոցիալական հիմքերը համադրվում և ըստ անհրաժեշտության հակադրվում են Հ. Օշականի կերպարների կենսաբանական կողմնորոշումներով վարքագծին, որն արևմտահայ բարքագիրն առաջնային է դիտում՝ դրանով բացատրելով տիպերի մեջ երևան եկած հայտնի շեղումները՝ «քրքուրների» ընդվզումն ու խոնարհումը: Գրականագետի բերած զուգահեռները («Աղբատի պատիվը» և «Մաղաքը», «Անուշ» և «Ծակ-պտուկը»)

ԳՐԱՆՈՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ (Գ) Գրպի, քիվ 1 (37) հունվար-մարտ, 2012

ՎԵՄ համահայկական հանդես

տիպաբանական քննության նոր հնարավորություններ են բացում՝ միաժամանակ հարստացնելով Հովհ. Թումանյանի գեղարվեստական աշխարհի հին ծալքերը:

Ս.Գանիելյանի աշխատանքի յուրահատկություններից մեկը Սփյուռքի գրական շարժումների ուրվագծումներն են: Նրան հաջողվում է Նահանջի փիլիսոփայության մեջ ռեալիստական և գերիրապաշտ հարաբերությունների «խաղաղ գոյակցությունը» ներկայացնել Շահան Շահնուրի գեղարվեստական մտածողության շնորհիվ, որը հանգեցնում է արևմտյան գրական աշխարհի հետ առարկայական իմացական շփումներին. Շահնուրը «ստուգում» և իր համար բացում է նոր՝ ֆրանսիական միջավայրը, հաստատում Արմեն Լյուբենի գրական տոհմածառի վերին սաղարթներում, իսկ մենք ստուգում ենք մեր գրական «հովերի» (արևմտահայ արժեքով) ուղղությունն ու «առազատների» ամբողջությունը:

Նույնը չէ՞ խնդիրը Վահան Թեքեյանի պարագայում. վերջինիս քնարական երգի ընթացքները համաքայլ են նույն ֆրանսիական սիմվոլիստական զարգացումներին և վեհացնում են բանաստեղծական հոգեաշխարհի կերպերի զինանոցը: Նա միաժամանակ ազգային մտածողության երակներում Մշակութային Հայաստանի ու Թումանյանի բերած ավանդույթների ջատագովն է: Քչերն ունեն բանաստեղծական ընկալման այս երկվությունը, բայց, ինչպես իր գրքում գտնում է Ս. Գանիելյանը, այն զորացնում է ոչ միայն Վ. Թեքեյանին, այլև առաջին հերթին մեր պոեզիայի կենսահյութը:

«Միջուկի տրոհումը» ուսումնասիրության գրապատմական հաստատումներից մեկը Ջարեհ Խրախունու տեղի ու դերի անշրջելի գնահատումն է այլևս: Գրականագետի համոզմամբ՝ բերգտնյան մայր դարպասներից նա հայ գեղարվեստական էպիկական աշխարհում ամրագրեց կամքի ազատության բարձր սկզբունքները: Ստամբուլահայ երգիչն առաջիններից է, որոնք փորձել են բանաստեղծությանը վերադարձնել աշխարհի իմաստավորման փիլիսոփայական տեսողությունը մարդուն և բնությունը ներգգալու ոչ զգացական շաղախով, այլ Անդրե Բրետոնի և Պոլ Էլյուարի չափումներով՝ «գլուխով կարդալու» գործյամբ: Վ. Թեքեյանի և Ջ. Խրախունու պատմական ծառայությունը հայ բանաստեղծության սահմանի նոր «ընդլայնման» փորձն է, որը սփյուռքահայ գրականության անժամանցելի նվաճումն է, նրա տիրական դիմագիծն ազգային միասնական ճանաչողության ածունեքում, ուր կա և՛ հավատարմություն բուրժուական-վարուժանյան-չարենցյան գծին, և՛ հայ բանաստեղծական ներուժի, համաշխարհային թռիչքի նկատմամբ խոր վստահություն:

Ս. Գանիելյանի ուսումնասիրության երկրորդ գլխի հիմնախնդիրն է դարձել օտարագիր գրականության համայնապատկերը («Օտարալեզու գրականություն. հիմնահարցեր, պատմություն, դեմքեր»): Այստեղ հետազոտվում են ոչ միայն համաշխարհային մեծության հասած ծագումով հայ գրողները (Մ. Առլեն, Վ. Սարոյան, Ա. Թրուայա, Ա. Վեռնոյ...), այլև օտարալեզու գրականության ներքին տարածքի ծավալումները: Բայց մի՞թե օտարագիրը հայ գրականության ներկայացուցիչ է: Գրականագետին հաջողվում է փարատել ընթերցողին առաջին հայացքից համակած տարակույսը. **ո՛չ, օտարալեզուն, անշուշտ, հայ գրականություն չէ, բայց այն աշխարհաքաղաքական ամենատարբեր կտրվածքներում կարծես անտեսանելիորեն ներկայացնում է ազգային գրական արմատական շահագրգռություններ, հեղինակի իսկ պատկերավոր խոսքով՝ «ձգում է դէպի ազգային պորտալարը»:** Սփյուռքահայ գրականության գիտակի այս տեսակետը

բավական թարմ է արդի հայ գրականագիտության համապատկերում:

Մասնավորապես անդրադառնալով օտարագիրների նկատմամբ Սփյուռքի և հայրենիքի ընթերցողական ու գիտական ուշադրությանը՝ Ս. Դանիելյանը մերժում է նրանց գեղարվեստական գործությունը «հայրենասիրության», հայկական նյութով պայմանավորելու ենթակայական հակվածությունը, ինչի հետևանքով հաճախ շեմից մերժվում են համաշխարհային անունի հասած այնպիսի հեղինակների ստեղծագործություններ, ինչպիսիք են Մայքլ Առլենի, Անրի Թրուայայի և ուրիշների վեպերը, որոնց միայն չնչին մասն է թարգմանված մեզանում: Ընդհակառակը, հեղինակը նրանց ստեղծագործությունների արժևորման նոր փորձ է կատարում՝ ներգրավելով գրական-ճանաչողական ուշադրան շատ զուգահեռներ հայ գրականությունից: Այս առումով նորարարական և շահեկան են Թրուայա - Նար-Դոս, Առլեն - Սարոյան - Սյուրմելյան տիպաբանական քննության արդյունքները, որոնք զգալիորեն ընդլայնում են մեր ավանդական յուրացումները: Հետևությունը մեկն է՝ հեղինակը կարևորում է գրողի ստեղծագործական խորքային կայացումը՝ այն գերադաս դիտելով ազգային արժարժումների հայտնի փորձից:

«Միջուկի տրոհումը» գրքի ուշադրան հարցադրումներից են նաև Մեծ եղեռնի գեղարվեստական անդրադարձները Սփյուռքի գրականության մեջ: Արդեն բավական ուսումնասիրված ու գիտական նրբին դիտարկումների ենթարկված այս հիմնախնդիրը ևս գրականագետը քննում է նորովի ու ներհուն հայացքով: Արդարև, Մեծ եղեռնը բոլորիս՝ թե՛ մեր, թե՛ Սփյուռքի Մեծ ցավն է. այն մխալու է հավիտենապես... Հայոց գեղարվեստական նորագույն գրականության պատմության մեջ այդ ցավն անվիճելիորեն գերակա է ու առանցքային և դեռ երկար կմնա այդպիսին... Այն, սակայն, ըստ Ս. Դանիելյանի, «նորագույն ժամանակում խլել է մեզից ստեղծագործական նոր հետաքրքրությունների ընտրութեան ընդգրկուն հնարատրությունը, կարելի է ասել, խլել է սփիռքահայ գրականութիւնից նրա զարգացման բազմապիստութիւնը, բազմագունութիւնը, գրական միթի ընտրութեան բացարձակ ազատութիւնը՝ արուեստագետի մեծութեան իրական գրասեղանը»²: Դժվար է չհամաձայնել գրականագետի հետ, առավել ևս, երբ հաջորդում է ծանրակշիռ փաստարկը. սփյուռքահայ գրողներից գրական անվիճելի հաջողության են հասնում հատկապես նրանք, ովքեր «կարողանում են յաղթահարել «պրոբատիկ» աւագանի շիկացած ջերմութիւնը, ովքեր գտնում են գրական-ստեղծագործական նոր ելագծեր, ովքեր միթի տեղապտոյտ կորուստներից յետո փնտռտուրը շարունակում են համարել գրողի տիրական առաքելութիւնը»³: Եվ դրա ամենամեծ վկան Շահան Շահնուրն է:

Ս. Դանիելյանի հեղինակած՝ սփյուռքահայ գրականության պատմության էջերում նշմարվում է ինչ-որ անթաքույց ցավ, մի անհանգստություն, որը համակում է նաև ընթերցողին. դա ոչ միայն «թեմատիկ ցավն է», որը բաժին է ընկել մայր գրականության տրոհված միջուկին, այլև դա ցավ է ծնված բացառիկ սիրուց՝ խորին տագնապ «այլեւս յոգնած Լամանչեցու» ճակատագրի համար: «Ճանաչողական եզրագծին է մօտենում արեւմտահայ գրականութեան՝ գրեթէ երկու դար տեսած հարուստ ճանապարհը,- անհուն թախիժով գրում է գրականության պատմաբանը,- թում է՝ փակուելու վրա են սփիռքահայ գրականութեան

2 Նույն տեղում, էջ 34:
3 Նույն տեղում:

պատմութեան դարպասները»⁴:

Ո՛չ, թող մեզ ների մեծահարգ գրագետը, երիցս ո՛չ: Մա միակ առարկությունն է, որ մենք ունենք գիտական հիրավի բարձրարժեք աշխատության նկատմամբ: Խորապես հասկանալով հեղինակի ոչ անհող տազնապների ակունքները՝ համոզված ենք, սակայն, որ մայր գրականության միջուկն ունակ է շարունակական տրոհումների, ուստի դրանց հայտնության տաղանդավոր մունետիկը իր եռհատորյակը համալրելու է նոր հատորներով...

Ալբերտ Ա. Մակարյան
Բանաս. գիյր. դոկտոր

**Albert Makaryan.- Suren Danielyan, The Split Kernel: History of
Diasporan Armenian Literature, Volume I, Introduction, Yerevan,
“Zangak-97“, 2011, 408 pages.**

Albert A. Makaryan

4 Նույն տեղում, էջ 35: